ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 56(1), 2022 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 911.3001

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Աշխատանքը զբոսաշրջային դեստինացիայի զարգացման և տարածքաստեղծ գործունեության գիտական հիմնավորումն է, ըստ որի տրամաբանորեն անցում է կատարվում պարզից դեպի բարդը՝ համակարգայինը: Համակարգ, որի բոլոր տարրերը դիալեկտիկական միասնության մեջ են, փոխհամագործակցում և փոխպայմանավորում են միմյանց: Յուրաքանչյուր տարր իր որոշակի տեղն ու դերն ունի ընդհանուր հիեարխիկ համակարգում:

Զբոսաշրջային համակարգի գործառույթը ոչ միայն հյուրընկալությունն է, այլ նաև որևէ տարածքի սոցիալ-տնտեսական, էկոլոգիական խնդիրների լուծումն է և ընդհանրապես տարածքի բնական, հասարակական, մարդկային (կապիտալի առումով) բոլոր կարողությունների նպատակային օգտագործումն է, որի համար անհրաժեշտ է. բարձրացնել ենթակառուցվածքների օգտագործման արդյունավետությունը, ստեղծել նորն ու ժամանակակիցը, տարածքում զբոսաշրջային տնտեսության զարգացումը սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, դիտարկել մեկ ընդհանուր համատեքստում, տարածքում կայուն զբոսաշրջության հենքի վրա ապահովել կայուն մարդկային զարգացումը:

Ըստ հետազոտության վերջնարդյունքի զբոսաշրջային դեստինացիան աշխարհագրական տարածք է, որտեղ հասարակական կյանքի կազմակերպման և գործունեության ապահովման շարժիչ ուժը զբոսաշրջային ինդուստրիան է իր ենթակառուցվածքներով:

https://doi.org/10.46991/PYSU:C/2022.56.1.086

***Keywords*:** tourism, destination, organization, management, problem, ecology, hospitality, sustainable development, nature, economy.

Խնդրի դրվածքը: Զբոսաշրջային դեստինացիայի մասին ավանդական կարծիքները նույն բովանդակության են՝ զբոսաշրջության համար գրավիչ տարածք, զբոսաշրջիկների պահանջմունքը բավարարող բնական հնարավորություններ կամ ենթակառուցվածքներ: Այստեղ զբոսաշրջային դեստինացիայի հիմնական գործառույթը հյուրընկալությունն է, իսկ ձևավորման դրդապատճառը՝ զբոսաշրջիկի պահանջմունքը:

Զարգացման ավելի բարձր մակարդակներում դեստինացիայի գործառույթներում տեղի են ունենում բովանդակային փոփոխություններ: Զբոսաշրջությունը ինքն է դառնում տարածքային, սոցիալական, տնտեսական, էկոլոգիական խնդիրները լուծող գործոն, որի շնորհիվ հյուրընկալության

* E-mail: avagyan@ysu.am

գործառույթին ավելանում են տարածքաստեղծությունը, հասարակական կյանքի տարածքային ձևերի ստեղծումը, կայուն մարդկային զարգացման ապահովումը: Ավելի ընդհանրական ասաց՝ դեստինացիայի պարզ ձևից անցում է կատարվում դեպի բարդը՝ համակարգայինը: Այդ անցման գիտական հիմնավորումը արդիական է և հնարավորություն է տալիս համալիրային հետազոտության միջոցով կանխատեսել զբոսաշրջային դեստինացիայի այնպիսի կառուցվածք, որը օժտված է կայուն զարգացման գործառույթներով:

Տեսամեթոդական սկզբունքները և մոտեցումները: Զբոսաշրջային դեստինացիան՝ տարածքային հատկություններով, համալիրային կառուցվածքով, ժամանակի և տարածության մեջ որոշակիությամբ աշխարհագրական հետազոտության օբյեկտ է:

Զբոսաշրջային դեստինացիան որոշակի տարածք է նաև երկրաչափական առումով: Առաջին հայացքից երկրաչափական է նաև նրա կառուցվածքը: Սակայն զբոսաշրջային դեստինացիայի կառուցվածքը առանձին տարրերի կայուն վիճակում գտնվող մեխանիկական միավորում չէ: Այն ունի ժամանակի և տարածության մեջ փոփոխվելու հատկություն:

Զարգացման ընթացքում դեստինացիան անընդհատ ընդլայնվում է՝ ավելի ընդարձակելով իր արեալը: Նոր արեալ, նոր տարրեր, կառուցվածքի նոր ձևեր: Դեստինացիայի կառուցվածքային տարրերը բովանդակային առումով նույնպես փոփոխական են: Փոխվում են ըստ հասարակական մտածելակերպի, պահանջմունքների գիտական մոտեցումների: Բովանդակային առումով փոխվում են տարրերը, ինչպես նաև նրանց միջև առկա հարաբերությունները, որի հետևանքով փոխվում է զբոսաշրջային դեստինացիայի ամբողջական պատկերը ժամանակի և տարածության մեջ: Այդ փոփոխության մեխանիզմի գիտական հիմնավորումն արդիական է և ունի կիրառական նշանակություն:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը: Զբոսաշրջային դեստինացիայի բնորոշման մեջ կան բազմաթիվ կարծիքներ, որոնց ընդհանրությունը այն է, որ բոլոր հեղինակներն էլ դեստինացիա հասկացությունը կապում են աշխարհագրական որոշակի միջավայրի՝ տարածքի հետ: Տարբերությունը դեստինացիայի տարրերի քանակի, որակի դերի գնահատման չափորոշիչների մեջ է:

Զբոսաշրջային դեստինացիայի բնորոշման մեջ կարելի է առանձնացնել Մ.Ա. Մորոզովի, Մ.Բ. Բիրժակովի, Ս.Ս. Նիկոլաևի կարծիքները:

Ըստ Մ.Ա. Մորոզովի «Զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջության կողմից գրավչությամբ օժտված տարածք է» [1]: Մ.Բ. Բիրժակովի բնորոշմամբ՝ «Զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջության տարածք է՝ ապահովված զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, կարիքների բավարարման անհրաժեշտ միջոցներով» [2]: Ս.Ս. Նիկոլաևի կարծիքով՝ «Զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջիների կողմից ընդունված վայր է (ռեգիոն, քաղաք, գյուղ, պարկ)»՝ զբոսաշրջինկների ընդունման, տեղավորման, սպասարկման անհրաժեշտ կազմակերպություններով ու ձեռնարկություններով (ենթակառուցվածքներով) [3]:

Վերոհիշյալ կարծիքները դեստինացիայի պարզ պատկերացմանն են վերաբերում՝ դրա ձևավորման և գործունեության սկզբնական փուլին, երբ դեստինացիան զուտ տուրիստական դեր ունի, և կառուցվածքի բոլոր

բաղադրիչները և դրանց գործունեությունը ծառայում են զբոսաշրջիկների կարծիքների և կարիքների բավարարմանը:

Զարգացման երկրորդ փուլում զբոսաշրջային դեստինացիայի կառուցվածքը բարդանում է, մեծանում են գործառույթների շրջանակները և դուրս են գալիս զբոսաշրջային տիրույթից: Երկրորդ փուլում դեստինացիայի տիրույթ են մտնում ոչ միայն զբոսաշրջության կամ զբոսաշրջիկների, այլ նաև տեղաբնիկների շահերը: Այդ շահերի համատեքստում դրվում են.

- զբոսաշրջիկների պահանջների բավարարումը,
- տեղաբնիկների սոցիալական խնդիրների լուծումը,
- տարածաշրջանի տնտեսական, էկոլոգիական խնդիրների համալիր լուծումը:

Երկրորդ փուլում զբոսաշրջային դեստինացիայի առանձին բաղադրիչները սկսում են միմյանց հետ սերտաճել և վերածվել մեկ ընդհանուր սկզբունքով աշխատող և մեկ վերջնարդյունք ակնկալող համակարգի: Համակարգ, որտեղ զբոսաշրջային դեստինացիան իր գործունեությամբ դառնում է տարածքաստեղծ գործոն և ձեռք բերում տարածքի (ռեգիոնի) հասարակական կայուն զարգացումը ապահովող կարողություն:

Այսպիսով, զբոսաշրջային դեստինացիայի վերջնարդյունքը կայուն զբոսաշրջությունն է, կայուն մարդկային զարգացումը:

Ընդհանրապես զբոսաշրջային դեստինացիայի բնորոշումը կարելի է հասկանալ երկակի իմաստով՝ կազմակերպչական և բովանդակային:

Կազմակերպչական առումով դեստինացիայի մեջ մտնում են զբոսաշրջությունը կազմակերպող գործակալությունները իրենց աշխատակազմով, զբոսաշրջությանը առնչվող պետական տեղական կառավարման մարմինները, տարբեր կարգի ու մակարդակի ցուցահանդեսները, տոնավաճառները փառատոնները, համաժողովները, սպորտային միջոցառումներ կազմակերպողները:

Բովանդակային առումով զբոսաշրջային դեստինացիան նեռարում է զբոսաշրջային ինդուստրիայի բոլոր բաղադրիչները, օգտագործվող ենթակառուցվածքները և զբոսաշրջության գործունեությունից ստացվող վերջնարդյունքը:

Գ.Ա. Մաշկովիչը զբոսաշրջային դեստինացիան գնահատում է չորս գործառույթների տիրույթում՝ տարածքային, տնտեսական, սոցիալական, կառավարման [4]:

Տարածքային գործոնը դեստինացիան դիտարկում է որոշակի տարածքում, որոշակի սահմաններում: Միաժամանակ դեստինացիան կապվում է և իր գործառույթները իրականացնում է տարածքի զբոսաշրջության առումով հետաքրքրություն ներկայացնող բնական և հասարակական մյուս բաղադրիչների հետ և նրանց հետ կազմում է մեկ ընդհանրություն:

Տնտեսական նշանակության բաղադրիչներ գտնվում են զուտ ֆինանսական դաշտում: Այստեղ առանց բաղադրիչների փոխկապակցությունները զուտ արժեքային են: Տնտեսական նշանակության բաղադրիչները դեստինացիայի մյուս բոլոր բաղադրիչներին մեկ ընդհանուր մտածելակերպի միավորող և գործունեություն բերող գլխավոր ուժն է որից կախված է դեստինացիայի ներկան ու ապագան:

Մ.Ա. Ջանջուղազովան զբոսաշրջային դեստինացիան տնտեսական առումով դիտում է որպես ապրանք, որը «շուկայական հարաբերություններում ունի իր պահանջարկային արժեքը [5]:

Սոցիալական նշանակության բաղադրիչներ. զբոսաշրջային ինդուստրիայի տարածքից և համապետական մակարդակով գործունեություն է: Նպատակն, առաջին հերթին, տարածաշրջանի սոցիալական խնդիրների լուծման հարցն է:

Կառավարման առումով զբոսաշրջային դեստինացիան դիտվում է որպես կառավարման օբյեկտ, իսկ որպես կառավարման սուբյեկտ ընտրվում է մարդկային կապիտալը:

Զբոսաշրջային դեստինացիան ունի նաև էկոլոգիական խնդիրներ:

Էկոլոգիական նշանակության բաղադրիչները զբոսաշրջային առումով ունեն երկակի բովանդակություն: Այստեղ շրջակա միջավայրի էկոլոգիան է և մարդու էկոլոգիան:

Շրջակա միջավայրի էկոլոգիան բնականոն շարժընթացին չմիջամտելն է, բնականը ամենակատարյալն ու ամենաներդաշնակն է, այն կոշտ եզրեր չունի, եղածն էլ պատմության ընթացքում հղկվել և շտկվել է: Զբոսաշրջությունը ոչ միայն չպետք է վնասի բնությունը, այլև օգտագործի այն գիտելիքների ավելացման, աշխարհայացքի զարգացման, կատարելագործման համար:

Մարդ–բնություն հարաբերությունների օպտիմալացումը, բնական միջավայրի որակի պահպանումը անհրաժեշտ պայմաններ են ոչ միայն մարդկային կայուն զարգացման, այլև համընդհանուր աղետի կանխման, մարդկային հարատևման համար [6]:

Մասնավորապես, էկոլոգիական և ընդհանրապես տնտեսական, սոցիալական խնդիրների լուծման գլխավոր գործոնը մարդու էկոլոգիան է (հումանիզացումը):

Ինչպես նշում է Մ. Կարապետյանը՝ «Էկոլոգիական խնդիրների մարդածին հիմքը ցույց է տալիս, որ մենք շրջապատող աշխարհը փոխում ենք մեր ներքնաշխարհին համապատասխան, ուստի և բնության ձևափոխումը պետք է սկսել հոգու այլակերպումից»: Անձի համար գերակա են երկրի, պետության շահերը: Այդ դժվարին խնդրի լուծման միջոցներից մեկը մարդուն դեպի բնական միջավայր տանելն է, բանականի և բնականի ներդաշնակման հասնելն է:

Մարդը շրջակա միջավայրի հետ կապված է «գենի կանչով» գենը հողի ու ջրի կողմն է, հողում և ջրում նախնիների սրբացված մասունքն են [7]:

Բնության մեջ ամեն ինչը ներդաշնակ է: Այդ ներդաշնակությունը մարդուն, անհատին հասցնում է բնականին, տիեզերականին, աստվածայինին: Նրա մեջ գերակայում են հոգեբանականը, հումանիստականը, այդ արժեքներով էլ որոշվում է անձի վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ [8]:

Մարդ–բնություն ներդաշնակության մթնոլորտում ձևավորվում է տիեզերական հարստությամբ, հումանիստական արժեքներով օժտված անձը, որը գիտելիքների շնորհիվ կառուցում է իր տունը, ապրելավայրը, որտեղ կան բոլոր պայմանները կայուն զարգացման համար [8]:

Տան կառուցվածքը ինքնին իր չէ, այլ հարուստ բովանդակություն ունեցող առարկա: Տան հարստության, կառուցվածքի կատարելության չափը կապված է տանտիրոջ գիտակցությունից, գիտականորեն կառուցելու ունակությունից, որի կրողը մարդկային կապիտալն է: Ինչպես նշում են Ա. Սամուելսոնը և Ու. Նորդենունը՝ «Մարդկային ռեսուրսների որակը տնտեսական զարգացման ամենակարևոր, եզակի կատալիզատորն է արտադրության կազմակերպման համար, պահանջվում է կառավարում, անհրաժեշտը

հմտություններ, որոնցով օժտված է միայն գրագետ և բարձր որակավորում ունեցող աշխատուժը» [9]:

Միայն համամարդկային հումանիստական արժեքներով օժտված, գիտելիքներով հարուստ, լայն աշխարհայացքով անձը կարող է մշակել զբոսաշրջային դեստինացիայի ներդաշնակ, կենսունակ, արդյունավետ գործունեությամբ օժտված համակարգ:

Եզրակացություն: Զբոսաշրջային դեստինացիայի ժամանակակից կառուցվածքի ստեղծման և գործունեության ապահովման համար անհրաժեշտ է ունենալ գիտականորեն հիմնավորված ռազմավարություն, ռազմավարական պլան, որը կներառի.

- պետության, պետականության, հասարակության շահերը,
- ռեգիոնի բնական և հասարակական կարողությունների օգտագործման նպատակայնացումը,
- առկա ենթակառուցվածքների բարելավումը, նորերի ստեղծումը,
- տեղացիների սոցիալական պայմանների բարելավումը,
- միջավայրի էկոլոգիական խնդիրների լուծումը:

Ռեգիոնը աստիճանաբար դառնում է ոչ միայն զբոսաշրջության գրավչություն, այլ նաև կայուն զարգացման դեստինացիա, որտեղ գերակայում են տեղացիների շահերը:

Ըստ վերջնարդյունքի՝ զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջիկների համար գրավչություն ունեցող աշխարհագրական միջավայր է (ռեգիոն), որտեղ մարդկային կապիտալի ուժով շարժման մեջ են դրվում բնական, հասարակական բոլոր կարողությունները՝ ստեղծելու կայուն զբոսաշրջության համակարգ և կայուն մարդկային զարգացման պայմաններ:

Դեստինացիայի ռազմավարությունը իրագործում է համամարդկային արժեքներով օժտված, գրագետ գիտելիքներով հարուստ պետության, պետականության, հասարակության շահերին նախապատվությունը տվող, աշխատանքային հմտությունների տիրապետող, գիտակից մարդը, որի շնորհիվ դեստինացիան դառնում է գիտելիքահեն տնտեսություն ունեցող համակարգ:

Ստացվել է՝ 25.02.2022
Գրախոսվել է՝ 11.04.2022
Հաստատվել է՝ 14.04.2022

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Морозов М.А. *Экономика и предпринимательство в социально-культурном сервисе и туризме*. Москва, Академия (2009), 6 с.
2. Биржаков М.Б. *Введение в туризме*. СПб., Издательский дом “Герда” (2000), 192 с.
3. Николаев С.С. *Стратегия формирования единого туристского пространства*. Автореф. дис. на соискание уч. степ. канд. географ. наук, СПб. (2000).
4. Машкович Г.А. Оценка понятия “туристская дестинация” в контексте современной туристики. *Известя ИГЭА* **6** (56) (2007), 89–92.
5. Джанджугазова Е.А. *Маркетинг туристских территорий*. Москва (2006).
6. *Մարդկային զարգացման հիմունքներ*: Երևան (2001), 17 էջ:
7. Կարապետյան Մ. *Բնություն և էթիկան*: Երևան (2010), 93 էջ:
8. Ավագյան Ա.Ռ., Մինասյան Լ.Ա. Էկոտուրիզմը որպես անձի ձևավորման գործոն: *Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր* (2019), 95–97:
9. Սամուելսոն Ա., Նորդհաուս Ու. *Տնտեսագիտություն*: Հատոր 1: *Մակրոտնտեսագիտություն*: Երևան, Ապոլոն (1995):

А. Р. АВАГЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СТРУКТУРЫ ТУРИСТИЧЕСКОЙ ДЕСТИНАЦИИ

Резюме

Работа представляет собой научное обоснование территориально-образующей роли в развитии туристской дестинации, согласно которой осуществляется логический переход от простого к сложному, системному. Система, в которой все элементы находятся в диалектическом союзе друг с другом, взаимодействуя и взаимно соглашаясь друг с другом. Каждый элемент имеет свое определенное место и роль в общей иерархической системе.

Функция туристической системы заключается не только в гостеприимстве, но и в решении социально-экономических, экологических проблем местности и, в целом, в целевом использовании всех природных, социальных, человеческих (в капитальном отношении) возможностей местности, что требует: повышения эффективности использования существующей инфраструктуры и создания новой, современной; развития туристической экономики региона, решения социально-экономических проблем, рассматриваемых в одном общем контексте; обеспечения устойчивого развития человеческого потенциала на основе устойчивого туризма в регионе.

Согласно результатам исследования, туристская дестинация – это географическая территория, где движущей силой организации и обеспечения общественной жизни является туристическая отрасль с ее инфраструктурой.

A. R. AVAGYAN

MAIN PROBLEMS OF THE STRUCTURE OF A TOURIST DESTINATION

Summary

The work is a scientific substantiation of the territorial-forming role in the development of a tourist destination, according to which a logical transition is made from simple to complex, systemic. A system, in which all elements are in dialectical union with each other, interacting and mutually agreeing with each other. Each element has its specific place and role in the overall hierarchical system.

The function of the tourism system is not only in hospitality, but also in solving the socio-economic, environmental problems of the area and, in general, in the targeted use of all natural, social, human (in capital terms) opportunities of the area, which requires: efficient use of the existing infrastructure, creation of a new, modern one; the development of the tourism economy of the region, the solution of socio-economic problems considered in one general context; ensuring sustainable human development based on sustainable tourism in the region.

According to the results of the study, a tourist destination is a geographical area, where the driving force behind the organization and provision of public life is the tourism industry with its infrastructure.